ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2021 թվականի №___Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության միջև 2021 թվականի նոյեմբերի 10-ին ստորագրված՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №24 համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանների՝

1) №3 հավելվածի 6-րդ կետում «առկա է համապատասխան տեղեկատվություն» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն հավելվածի 9.1-րդ կետի համաձայն հաշվարկված $\Delta AR_{f(i-1)}$ մեծությունը» բառերը.

2) №3 հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագները՝

1) բոլոր Բաժանորդների համար միասնական սակագնային համակարգ կիրառելու դեպքում հաշվարկվում են՝

ա. ջրամատակարարման ծառայության մատուցման համար ($T_{ՋՄi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ՋՄi} = T_i * 85/100,$$

բ. ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար ($T_{ՋՀi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ՋՀi} = T_i * 15/100,$$

2) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ խոցելի (սոցիալապես անապահով) սպառողների համար արտոնյալ սակագներ սահմանելու առաջարկություն ներկայացվելու դեպքում հաշվարկվում են՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդներին ջրամատակարարման ծառայության մատուցման համար ($T_{ԽՍՋՄi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ԽՍՋՄi} = T_{Խi} * 85/100,$$

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդներին ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար ($T_{ԽՍՋՄi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ԽՍՋՀi} = T_{Խi} * 15/100,$$

որտեղ՝

$T_{Խi}$-ն i-րդ հաշվարկային տարվա համար խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդների համար որոշված Մանրածախ Ծառայությունների մատուցման գումարային սակագինն է,

գ. մյուս Բաժանորդներին ջրամատակարարման ծառայության մատուցման համար ($T_{ՄՋՄi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ՄՋՄi} = \frac{T_i * V_{bi} - T_{Խi} * V_{Խi}}{V_{bi} - V_{Խi}} * \frac{85}{100},$$

դ. մյուս Բաժանորդներին ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար ($T_{ՄՋՀi}$)՝ հետևյալ բանաձևով.

$$T_{ՄՋՀi} = \frac{T_i * V_{bi} - T_{Խi} * V_{Խi}}{V_{bi} - V_{Խi}} * \frac{15}{100},$$

որտեղ՝

$V_{Խi}$-ն i-րդ հաշվարկային տարվա համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդներին մանրածախ ջրամատակարարման ծավալն է, որը որոշվում է հաշվարկային տարվան նախորդող 12 ամիսների (որի վերաբերյալ առկա է համապատասխան տեղեկատվություն) համար տվյալ Բաժանորդներին մատուցված մանրածախ ջրամատակարարման ծառայության փաստացի ծավալների հիման վրա:».

3) №3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1 կետով.

«9.1. Որևէ i-րդ հաշվարկային տարվա համար սույն հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ծառայությունների մատուցման սակագներ սահմանելու դեպքում տվյալ հաշվարկային տարվան հաջորդող տարվա համար Ծառայությունների մատուցման սակագների հաշվարկների «$AR_{f(i-1)}$» բաղադրիչում հաշվի է առնվում նաև խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդների կանխատեսվող մանրածախ ջրամատակարարման ծավալի նկատմամբ փաստացի շեղումների արդյունքում առաջացող լրացուցիչ օգուտները կամ վնասները ($\Delta AR_{f(i-1)}$), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta AR_{f(i-1)} = \left(ՏԿ_{ԽՍ(i-1)} + ՏԿ_{ԽՀ(i-1)}\right) * V'_{f(i-1)} * \Delta T_{Խ(i-1)},$$

որտեղ՝

$ՏԿ_{ԽՍ(i-1)}$-ը i-րդ հաշվարկային տարվան նախորդող 12 ամիսների (որի վերաբերյալ առկա է համապատասխան տեղեկատվություն) համար խոցելի (սոցիալապես անապահով) սպառող հանդիսացող Բաժանորդների փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալի կշիռն է բոլոր Բաժանորդների մանրածախ ջրամատակարարման ծավալում,

ՏԿ$_{\text{Խ<(i-1)}}$-ը i-րդ հաշվարկային տարվան նախորդող տարվա Ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներով նախատեսված խոցելի (սոցիալապես անապահով) սպառող համարվող Բաժանորդների հաշվարկային մանրածախ ջրամատակարարման ծավալի կշիռն է բոլոր Բաժանորդների մանրածախ ջրամատակարարման ծավալում,

V′$_{f(i-1)}$-ը i-րդ հաշվարկային տարվան նախորդող 12 ամիսների (որի վերաբերյալ առկա է համապատասխան տեղեկատվություն) համար բոլոր Բաժանորդների փաստացի մանրածախ ջրամատակարարման ծավալն է,

ΔT$_{\text{Խ(i-1)}}$-ը i-րդ հաշվարկային տարվան նախորդող տարվա համար մյուս Բաժանորդներին (բացառությամբ խոցելի (սոցիալապես անապահով) սպառողների) Ծառայությունների մատուցման գումարային սակագնի և խոցելի (սոցիալապես անապահով) սպառող հանդիսացող Բաժանորդներին Ծառայությունների մատուցման գումարային սակագնի տարբերությունն է:».

4) №3 հավելվածի №1 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
__ _____ 2021թ.